

լեր են անվում: Մերազանք իրա փոխանորդ Խաչիկ վրդ. Գող- անցին ուղարկել է գաւառները: Ատրպատականի վիճակի ընդհա- նուր մարդահամարը պատրաստե- լու և տեղական ազգային գոր- ծերը կարգ կանոնի ենթարկելու: Խաչիկ վարդապետին նաեւ պաշ- տօն յանձնուած է բոլոր գաւառ- ներից քեզով ընտրել տալ Թաւ- րիցի համար մի մի ներկայացու- ցիչ՝ իրանց կանգնողատներով, Թաւրիզում վարչական ժողով կազմելու համար, որը և առաջ- նորդի նախագահութեամբ պէտք է վարի թիւսը գործերը:

Սրբազան առաջնորդի յորդոր- ների և քաջալերութիւններով շնորհիւ, Թաւրիզի գաւառի «Մարտի» հարցը վերջնականապէս լուծեց և հաստատուեալ ամբար հիմքերի վրա դրեց: Նախնական ծախ- սերի համար նախաձեռնող հան- դիտացու «Թաւրիզու Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը» 1,000 թուման (5,000 ֆրանք) ներբերով: Կեդրոնական դպրոցը այս սեպտեմբերին պէտք է բացուի, յուսալի է որ մեծագումար նպաստ- ներ լինին զանազան կողմերից, դպրոցի գոյութիւնն ապահովե- լու համար:

Սամառում եւս բացելու է մի «Կեդրոնական Գիւղատնտե- սական Գարոց», որի համար այժ- մէն ներկայումս է 11,000 ռուբլի:

Սրբազան առաջնորդը աշխա- տում է ունենալ մի աեղային հայ թերթ, մի քանի արգելքներ կան, եթէ նրանք բարձր են, թերթի գոյութիւնը կարելի է ապահովուած համարել:

«Կարանական ընկերութիւնը» իրա գործունէութիւնը կրկնա- պատկերով ամէն շաբաթ տալիս է հասարակական ձրի դաստիարակ- թիւններ: Եթէ վարչութեան ղեկը առաջադիմականները ձեռքումը լինէր, աեւլի մեծ քայլեր յու- սալի էր. ներկայ վարչութեան

մեծամասնութիւնը բաղկացած է յետադէմներից և պահպանողա- կաններից: Սակայն յուսալի է, որ նոր ընտրութիւնը, եթէ տեղի ունենայ, աեւլի զիտակից ան- հասներ ընտրեն:

ՄԻՐՁԱ.

Փ. Պոլիս, 20 Մարտ (Մեր մասնատր քրքրակցին)

Որքան ալ չը սիրեմ թղթակց- ցութիւններու մէջ թաղականի, հոգաբարձուի, վարդապետի հին- ցած խնդիրներով զբաղի ու զբաղեցնել «Նորժամ» ընթեր- ցողները, դժբաղդարար, երբ գրիչս ձեռքս կառնեմ, ուրիշ նիւթ չեմ կրնար գտնել: Բոլոր ֆ. Պոլսեցիները անկարգ, անե- ըստ վարդապետի մը և մէկ քանի յամառ և անպարկեշտ թաղա- կանցուներու ետեւէն ինկած՝ կը հալածեն և կը հարուածեն ան- խընայ: Կուզեն բռնի հասկցնել տալ ազգային գործերու և գըղ- րոցին սպառնական անկեալ մի- ճակը անսնց՝ որոնք իրենց ամե- նէն գձուձ կիրքերով մտորուն՝ ոչ կարողութիւն, ոչ արամադրու- թիւն ունին մտիկ ընելու իրենց գէժ բարձրացող որեւիցէ ար- դար բողբոջ ձայնի: Ինչպէս կարելի է օրինաւոր ազգային վարչութիւն, բարեկարգ վար- ժարան հաստատել հոն, ուր հա- սարակութեան մէկ մասը անոր կարեւորութիւնը չը զգալէ զատ, ոչխարի միամտութեամբ, բիրե- րով և զաշոյններով կաշակցի ազգին տունը քանդող «օճախ» «օճախ» մը որ ամենէն ազտօս միջոցներու անգամ զիմիւր չը վարանիր, ոչ տեղական կառա- վարութեան առջեւ խայտառակ- ուած, թուրք հիւպատոսին դուռը ձեռք կառնէ գիշեր և ցերեկ:

Հիմա՛ ա՛լ խառնակիչ վարդա- պետը արտաքուսեցաւ ֆ. Պոլի- սէն, ոչլամիտ երիտասարդու- թիւնը պարտաւոր է իր ուշը

դարձնել ազգին ընդհանուր ցա- ւերուն: Հայաստանի սովածները կան անգին. թշուառները, որ- բերը. իսկ ֆ. Պոլսի մէջ դրամ կը հաւաքեն աներես վարդապետի մը տալու համար կոյր հակառա- կութեան ոգիէն յղուած... Ետտ չերթար, ամենէն յամառ մար- դերն անգամ պիտի զգան իրենց վիճակին գառնութիւնը և իրենք պիտի ալաչեն որ երիտասարդու- թիւնը իր ձեռքերով վերակազմէ իրենց յայքայած գործը:

—Անցեալ շաբաթ գիշեր Տ. Զառուբեան, Պոլսկար և Հայ դերասանական խումբերուն ա- ջակցութեամբ, շքեղ ներկայա- ցում մը տուաւ երեք լեզուներով, իբր հրաժեշտի ողջոյն դերասա- նական կեանքէն, Եղիպտոս մեկ- նելուն առթիւ: Թատերավայրը հայ և պոլսկար բաղմութեամբ լեցուած էր: Հասոյթը գոհացու- ցիչ:

Նիւ-Եորք, 21 Մարտ

Ամերիկան այիւս կիներու գրախ- առ չէ: Նիւ-Եորքի նահանգը, մասնաւորա- բար երկկ գեղեցիկ սեփին գփփքն էր. որովհետեւ ամենէն աեւլի քա- ղոքակրթուած ու կնապաշտ այս նա- հանգը երկկ պաշտօնապէս սպան- նեց... մարդապան կին մը:

Տարի մը առաջ, Մարթա Փլէյս ա- նունով բաւական հարուստ կին մը, Պրուքլինի մէջ, բուռն եւ զառնա- զոյն նախանձով ու սաեւութիւնով կը սկսի սաեւ իր խորթ զեղազէմ չա- փահաս աղջիկը: Կանացի բոլոր քաղցր ու կծու յեղունքը կը թա- փէ իր երկրորդ էրկան, որ սուսէն զուրս վոնտէ մէկհատիկ հարազատ աղջիկը, բայց ի զուր: Եւ կինը... կը բարկանայ, կուզէ վրէժ լուծել թէ՛ աղջիկէն եւ թէ՛ էրկիկէն ու... կը լուծէ... Կացինի հարուածներով կը ջախջախէ փափուկ անկողին մէջ անուշիկ ննջող աղջիկը. անոր կար- մըրուկ երեսները կայրչակէ կիզիչ ասխներով: Բայց զեռ վրէժը լուծ- ուած չէ: Կին մը ատիւր չէ. ատե- լէն վերջ հրէ՛ մըն է անիկայ:

Կացինը ձեռքը, դարձնակալ կըս- պասէ ամուսինին սուս գալուն, եւ վերջնայն ներքնասանդուկներէն վեր ելած միջոցին, կը յարձակի ամուս- նոյն վրայ, հարուածը կիջնեցէ ա- նոր գլխուն ալ: Մարդը կիյնայ մա- համբձ: Մարթա Փլէյս կարծելով թէ ալ մեռած է ան, կը վազէ իր սեղանակը, ինքզինքն ալ կը վիրաւորէ. ածխա- կազին խողովակները կը բանայ ու կիյնայ գետին, սպասելով իր ալ մահուան:

Ուսուկաններ կը կանչուին վիրա- տորուած էրկան կողմէն եւ խօսոյն կը ձերբակալեն զեռ փափուկ հոգին չը տուած կինը: Աղջկայ յօշոտուած զիակը կը թաղուի. էրկիկ կնիկ հի-ւանդանոցը կազմակերպուի: Ահա տասմի կարճ պատմութիւնը:

Ահաւասիկ ամերիկուէի մը, որուն քով քրդուէին ու թրքուէին հրեշ- սակներ կը մտնէ զստրասպան, ա- մուսնասպան և անձնասպան կին մը: Ինչ ընելու էր մասնաւորաբար նիւ- Եորք նահանգի կառավարութիւնը այս կնիկան:

—Անշուշտ պիտի ըսէք օրէնյալաւ- րամադրութեան յանձնելու էր զայն և անոր արամադրած ամենախիսա պատիժը գործադրուելու էր անոր վրայ. լաւ: Նիւ-Եորք նահանգի օ- ղնէքը մարդասպանին կեքտրական անթոք ունի, առանց սեփի խարու- թեան: Նահանգին զատարանները ու կառավարչը վճռեցին որ այս հրէ- շուէիին միակ աեղը այդ անթոքին վրայ է. բայց հազիւ այս վճիռը տրուեցաւ, հրապարակ եկաք զեղե- ցիկ սեփի ներկայացուցիչները, կզե- րականութեան մէկ մասը եւ ամենէն ազգու կերպով, Նիւ-Եորք ամենէն շատ սարածուած թերթը, ձրընքը: Աստք ամենէն յուզիչ, ամենէն ազգու ա- ղաղակը բարձրացուցին պատանջելով որ սկսար, ջղաճգութեան ենթակայ, փափուկ սիրա ունեցող սեփը պէտք չէ որ մահուան բոլոր արհաւիրքնե- րուն ենթարկուի: «Երեւակայեցէք, կըտէին, կին մը որուն օրիս առաջ պիտի գոժուէր թէ այս ինչ օրը եւ ժամուն պիտի մեռնէր: Օ՛հ, ի՛նչ ջղաճգութիւններ, ի՛նչ շարչկու- ներ, ի՛նչ երազներ, ի՛նչ յուզում- ներ ու տենդեր պիտի ունենար անի- կայ»: Չէ՛, մարդասպան պատժել չէ այս, կը գրէին, այլ անիկայ շարչա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՀՍՎԱՆԵՐ

Մարդկային հասարակութիւնների կեանքի մէջ լինում են այնպիսի ժամանակներ, երբ ամէն բարձր ու սուրբ դաւանանք ոտի տակ է աըր- լում, կասկածի, թերահաւատու- թեան անօրակայ է դառնում:

Տասնութերորդ դարի երկրորդ կիզում եւ մեր օրերում մի այդ պիսի հով փեւ սկսեց եւ զիտ բաւական ժամանակ պիտի փչէ:

Անցեալ դարում եւ այս դարում կառնածի առարկան համարեա՛ մի եւ նոյնը եղաւ:

Մարդիկ սկսեցին մի վարկեան կառնածիլ տատանիլ և հաւատարա- կըջութիւնը կորցնել:

Պակասեցաւ զէպի գիտութիւնը, զէպի մարդկային առաջադիմութիւ- նը մարդու ունեցած հաւատքը:

«Օգո՛ւտ թէ՛ վեա է բերիլ մարդ-

կութեան գիտութիւնների և ար- հեստների զարգացումը» — հարց դրեց անցեալ դարի մէջ ֆրանսիական գիտութեան ճեմարաններից մէկը:

Իուր թոռ. մի անյայտ ու թա- փառարջիկ փռնէլցի՝ Ժան-Ժաք Ռուսօ եւ սկսեց ամէնաբարձր գեղա- սիրական, հրապարակաբանական ու ճարտար սոճով ապացուցանել, որ գիտութիւնների և արհեստների զարգացումը աեւլացրել է մարդկա- յին թշուառութիւնների թիւը, զլու- րել է նրան սանջանքի, աղտոզու- թեան ու խեղճութեան ծովը: Այս նորելոյթ թշուառութիւններից ա- զատուելու համար միայն մի՛ ճանա- պարհ կայ. — յետ գտնուել զէպի բնութեան գիւրիկը:

Այս դարում հարցը դնողը չեղաւ մի որ եւ է ճեմարան կամ համալսա- բան. հարցը ինքնին սուր կերպա- բանք էր ստացել եւ ամէն մի գրողի գրչի տակ էր ընկնում բռնադատիկ կերպով:

Այս դարում յանդուզն մաքերն

աեւլի շատ են: Գիտութիւնների անկարողութիւնը մերկացնելու ե- լած անձերի թիւն էլ շատ է:

Բայց անպայաման՝ այդ բոլոր ան- ձերից ամէնաաղաքաւորն ու ամէ- նից աեւլի յարգաւածն է Ռուս գրող Լեւ Նիկոլայեւիչի Տօլստօյը:

Սրանից մի քանի տարիներ առաջ տպուեցաւ նրա մի տրամը «Լուսա-ւորութեան պտուղները»: Այդ թատ- բոնական կենդանի ու գեղարեստով լի գրութիւնը մի թունալի ծաղր է՝ ներկայ գիտութեան գլխին թափ-ւած:

Այնտեղ գուրս են բերւած եւ ու- սուցչապետներ, եւ բժիշկներ, եւ լրագրագրագրներ, եւ գիտնականներ եւ այլն, որոնք բոլորն էլ զբաղւած են «հիպոսիզմով», հոգեհետու- թեամբ, կենդանական մազնետիզմով, սեղաններ խօսեցնելով, զուշակու- թիւններով եւ այլն, եւ այլն: Իսկ այդ ամէնի մէջ գուրս է բերուած, հանձարին յատուկ ճարպութեամբ, մի գեղջկուէի, մի սամիկ աղախին իր «բնական ինքզով», Ռուսոյի «la sainte raison»-ով, որ շնորհիւ

«գիտութեան» բացակայութեան, «մատի վրայ խաղցնում է» բոլոր այդ «լուսաւորածներին»:

Թէ՛ Ռուսօսի, թէ՛ Տօլստօյի գոր- ծերը կատարւած են անպայաման տա- ղանդաւոր ձեւով: Նրանց գրածները կարդացողները կամայ-ակամայ զգում են իրենց առաջ տաղանդի եւ նոյն իսկ հանձարի զօրութիւնը... բայց, կարծես միշտ, ամէն սողի ընթեր- ցումից յետոյ՝ մի բայ գուռ մնում է ընթերցողի առջը. «չե՛ն սխալուում արդեօք այն, ինչ երթէ մեղադրելի չէ»:

Հարցն այս օր էլ զիտ հնացած չէ: Ամէն մի փթած աստուածարան, ամէն մի հաւատացող քրիստոնէայ պրոտմ է միշտ ձեւ կերտն ի վայր. «ի՛նչ արին ձեր գիտութիւնները, ձեր քաղաքակրթութիւնը, ձեր ա- տաջողութիւնը մարդկանց ար- ցունքները սրբելու, նրանց տան- ջանքները թեթեւացնելու, նրանց երջանակացնելու գործում»:

րել տանջել է. չարչարանքն ու տանջանքը վայրենի գարեբու ու ազգերու օրէնքն էր. յուսադարգ Ամերիկայի օրէնքը չը կրնար ըլլալ:

Ճորճըրի պնդումն էր, թէ այս կիրքը սոսկալի արարած մըն է, արժանի ամենախիստ պատիժի, եւ պէտք էր արգիլուեր անոր իր հրէշային արարքները գործելու. յաւէտ դայն բանտարկելով, բայց ո՛չ ելեքտրականութիւնով ալ չարելով: Եւ ճորճըրին միացան Մաքս Նարտո, Լուպորցո, Ինկերսոլ եւ մեծ իմաստասէրներու բանակ մը, ու պահանջեցին կնկոն բանտարկութիւնը միայն, ըսելով թէ, ո՛չ թէ այս մասնաւոր կիրքը արժանի էր որեւիցէ նկատողութեան, այլ որովհետեւ մարդկութիւնը կիրք մը չարելու չափ քաղաքակրթուած է:

Հարիւր տարի առաջ նմանօրինակ յանցաւոր մը ալ չար իւրի մէջ պիտի ալարէր: Այժմ յանցանքը նոյնքան անուիլ է որքան այն ժամանակ: Բայց ժողովուրդը այսօր բարեփոխուած է: Արդ, եթէ ժողովուրդը կիրք մը իւրի մէջ չարելու չափ յառաջացած է, մի՞թէ ելեքտրականութիւնով ալ չարելու չափ ալ քաղաքակրթուած է:

Շտաբթներ վիճեցին մամուլը, իմաստասէրները եւ օրէնքին գործադրութիւնը պահանջողները. առաջինները ամէն ճիշդ խօսեցին նահանգին կառավարիչին վրայ ազդեցութիւն բանեցնելու որպէս զի մեղմացուցիչ պարագաներ պտնէր ու ներէր այս կնկան, մահուան վճիռը ցկեանս բանտարկութեան փոխելով: Սակայն ի դուր. կառավարիչ Ռուզվելթ զինուոր մըն է, ու երկու խօսքով որոնց կնկայ ճակատագիրը:

— Օրէնքի ընթացքին չեմ կրնար միջամտել:

Ամերիկայի ամենէն արմատական թերթը եւ ամենէն ազատ խորհող մարդը, Ինկերսոլ, — միջանկեալ ըսեմ թէ այս մարդու ազատ քարոզները մտերս հայերենի թարգմանուած կը հրատարակուի Պ. Իգնատիանի կողմէն — յուսահատելով կնկան կեանքը փրկելէն, սկսան օրէնքին, բուն չարիքին, վրայ յարձակիլ: Ճիշտ է օրէնքը, որ կը թոյլատրէ այս լուսաւորուած աշխարհին մէջ պաշտօնական մարդասպանութիւնը ելեքտրականութիւնով. եթէ այո՛, ուրեմն ինչո՞ւ սոսկումով կարողալ ու

գատապարտել այրելու, կացինով յօշոտելու, չարչարանքով մեղսներու հին ժամանակի օրէնքները: Անյիշատակ ժամանակներէ ի վեր մարդը զմարդը սպաննած է պաշտօնապէս զանազան միջոցներով, բայց միշտ սպաննած է, կացինին, պարանին, հրացանին ելեքտրականութիւնը յաջողելով երբէք չենք փափկացած ու սղնուացած եւ իրաւունքը ստացած սպաններու մեր նմանները:

Տղէտ էինք, իչու ծնօտով կը սպաննէինք. Զարգացանք... Ելեքտրականութիւնով կը սպաննենք. անաւարբերութիւնը:

Բայց օրէնքը խուլ մնաց եւ երէկ առօք փառօք բազմեցուց կիրքը աթոռին վրայ. մերկացուց անոր փափուկ սրունքները, ելեքտրականութիւնը ծայրը անմիջական հաղորդակցութեան մէջ դնելու համար անիլեց ոսկեթիւ ծամերը, ելեքտրականութեան անոր գլուխը անցուց, եւ, մէկ... երկու... երեք մանրերկրորդ — անա օրէնքը ելեքտրական հեղուկի միջոցով, առաջին անգամ ըլլալով, պատժած էր իր դէմ մեղանշող կիրքը:

Չը միանանա՞նք Ինկերսոլի հետ ըսելու. «Անհատը իր թշնամին կը սպաննէ, իսկ կառավարութիւնն ալ իրը. իրական քաղաքակրթութեան հասած կըլլանք, երբ ո՛չ որ, ո՛չ զքե սպաննէ»:

Թ. Չ.

Ն. Ա. Մ. Ա. Ա. Տ. Ո. Ւ. Փ.

Յ. Ս. Բ. — Ուսիւրը. — Շնորհակալութեամբ կը նղուռնինք ձեր աջակցութիւնը: 10 օրինակ թերթ կը զրկուի ձեզ ամէն թիւէն:

Խ. Գ. — Լօրէնս. — Նամակատուէն ստացանք 25.55ֆր. փոխանակ 36 ֆր. ի զոր նամակով յայտնած էիք: Կը խնդրենք իմացուցէք պատճառը:

Յ. Գ. — Ինկուպուլ — Ստացանք 2.50 ֆր.

Տ. Մ. Ք. — Ուսիւրը. — Ձեր զրկած 50 ֆրանքը կը մնայ Պուրկալ Ատուածատուրեան եղբարց քով: Երեք նամակներ

գրեցինք. չը պատասխանեցին անգամ: Հարկաւորը տնօրինեցէք:

Յ. Մ. Պ. — Պուրբէշ. — Հանրութեան օգտակար գրութիւնները հրատարակելու համար կաշառք կամ փոխարինութիւն չենք պահանջեր: Եթէ մեր ճանչցած Երզնկային է, ալդէն խայտառակուած է ամէն կողմ, և փախած: Շնորհակալութիւն ձեր ջանքերուն համար:

Ջիւրիւ. — Յ. Հալաճեանի նամակները կը հասնին սա հասցեով:

M. Krikor Khriguian
Aegerten strasse 16 III, Zurich III
(Suisse)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարք Տ. Օրմանեան Վառնայի քահանաներէն Տէր Գեորգ Հիւրմիւլեանի կը հաղորդէ թէ Հայաստանի սովետականներուն համար «Նարժում»ի միջոցով զրկուած գումարը, 168.60 ֆրանք ոսկի, տոացած է:

— «Նարժում»ի 107 րդ. թիւին մէջ իբր լուր յայտարարուած էր սխալմամբ թէ Ալեքսանդրիոյ վերակազմեալ Հնչուկեան և Դաշնակցական կոմիտէները համաձայնած են բարենպաստ գործի մը համար: Համաձայնողները անհատներ են ոչ թէ կոմիտէներ:

— Լօտոսէն Տիկ. Խուարդ Գ. Կիրայէնկեան 150 ոսկի զրկած է Պատրիարքարան գաւառացի կարօտեալներուն բաշխելու համար: Մանչեսթըրի հանգանակութիւնը զոր յիշեր էինք, կը շարունակուի: Հանգանակութեան գումարը հասած է 500 ոսկիի:

— Գահիրէի մէջ սկսած է հրատարակուիլ կիսամսեայ հանդէս մը Փիւնիկ անուամբ: Մեր Աղեքսանդրիոյ թղթակիցը, Կարիճ,

այս թերթին նկատմամբ զրկած է մեզ քննադատական յօդուած մը զոր պիտի հրատարակենք յառաջիկայ թիւով:

— Ձէյթունէն «Փիւնիկ»ի գրքուած նամակ մը կը ծանուցանէ թէ ցորենի սղութեան և արմաթի պակասութեան պատճառով, հոն մեծ թշուառութիւն կը ափրէ: Գրիտոնեայ գայմաղամին ընթացքէն զոհ են: Ս. Ատուածածանի վանքին մէջ նոր որբանոցի մը բացումը կատարուեր է յիսուն որբերու համար:

— Մելքիսեդեկ Եպս. Մուրաւեանց, Զմիւռնիոյ նորընտիր առաջնորդը, մեծ խանդավառութեամբ ընդունուեր է: Այս առթիւ Զմիւռնիացի հարուստ հայ մը խոստացեր է, եկեղեցւոյ արտաքին պատերը քակելով, տանի չափ քարակիր խանութներ շինել և աղբիւն նուիրել:

— Ռուսահայ Պ. Ճանչեանի Պատրիարքարան զրկած նուէրներով չորս որբանոցներ կը պահուէին Հայաստանի մէջ: Վերջերս զբոկուած 5,000 բուպլիով նոր մըն ալ բացուեցաւ: 10,000 բուպլի ալ զրկուած է միւս չորս որբանոցները շարունակելու համար: Վանի կարօտեալներուն համար ալ Պ. Ճանչեան 2,000 բուպլի զրկած է:

— Պարսկաստանի Սալմաստ գաւառի Սաւրա գիւղի բնակիչներէն Պ. Յոնանեանց, Սալմաստի հայոց ուսումնարանին համար 10,000 բուպլի նուիրեր է: Այս գումարը պիտի տրուի չորս տարուան մէջ: Պ. Յովհաննէս Սարգիսեան ալ 1,000 բուպլի նուիրեր է նոյն նպատակին:

— Կովկասի մէջ աւազակութիւնը ջնջելու համար տեղ տեղ կառավարութիւնը զէնք կուսայ հայերուն: Աւազակները բնդհանրապէս թուրքեր են: Վերջերս Մանաս անուն կտրիճ հայ մը իր երեք ընկերներով, յաջողած է

Հարցը, ստալին հայեացքից, երևում է հիմնաւոր... բայց մի փոքր խոր կերպով քննելուց յետո՛յ մենք խելոյն բաց ենք անում նրա բոլոր անմտութիւնը:

Ես ունիմ մի սուր դաշոյն: Դրանով ես մի անմեղ մարդ կըսպանեմ, թալանելու համար... Եթէ ես ոճրագործ եմ: Թէ ինչո՞ւ ես ոճրագործ եմ՝ այդ էլ ուրիշ խնդիր է. գրա մասին չենք վիճում:

Իսկ եթէ ես ոճրագործ չեմ, այլ բարի մարդ, այդ դաշոյնը գործ կածեմ, օրինակ՝ մի վայրենի վարազի գէմ, որ յարձակել է մի մանուկի վրայ, նրան պատուելու համար: Դաշոյնը սուր է. նա ոչ բարի է, ոչ էլ չար: Նրա լաւ կամ վատ գործունէութիւնը կախուած է նրան գործածող ձեռքի որպիսութիւնից:

Լաւ է, բարի է գաշոյնը գործածող ձեռքը, նա բարի գործի կը ծառայէ, օգտակար արդիւնքներ կը տայ, վատ է արդիւնքն էլ վատ կը լինի:

Գիտութիւնների նոր ծլած վարկեանից սկսած մինչև մեր օրերը նրանցից օգտուող եղիլ է ոչ ամբողջ հասարակութիւնը, այլ մի գասակարգ. հարուստը, տիրողը, զուրմը, բռնակալը, ասպետը, տասակալը, վաշխատուն, զբամառէրը... իսկ ստրուկը, ճորաը, անապատը, ուսմիկը եւ բանւորը միշտ միասուել են նրանցից:

Գիտութիւնները միշտ գնել են մի գասակարգի ձեռքում — տիրողների, հարուստների ձեռքում: Եւ տիրողները գործ են անել նրանց իբր զէնք ընդդէմ հպատակներին, խեղճերի ու փոքրերի:

Գիտութիւնը մեղք չունի, որ զարգանում եւ աւելի թեթեւացնում է մարդկային աշխատանքը: Մեղքը հասարակական անարդար կազմակերպութեանն է. որ թոյլ է տալիս մի իւրում մարդոց ճնշել, կեղեքել ու հարստահարել միւսներին եւ նրանց հաշտով հարստանալ:

Ռուսոն Տըլստոյը հանճարներ են,

միայն պակասուոր, միակողմանի հանճարներ, որ լաւ են տեսնում հասարակութիւնների ցաւերը, միայն չեն կարողանում քննել, վերլուծել և երեւոյթները պատճառներին, նրանց իսկական արմատներին հասնել... բաց անել թշուառութիւնների արմատական աղբիւրները եւ նրանց վրայ քար գցելու աշխատիլ:

Այդ կարգի գրողների մէջ խելքից աւելի՛ զգացմունքներն են գործում: Նրանք զգում են, որ մարդկային հասարակութեան ստունը գող է մտելու գումը են գողը գտնել, նրան պատժել, բայց սեփական զգացմունքների յորդուէթիւնից զրգած՝ բռնում են հէնց առաջին անցորդի վզից, նրան համարելով գողը...

Դրանք հասարակութեան հիւանդոտ ջղերն են, որ որոնում են զարման ընդհանուր բողբոջ անարդարութիւնների դէմ եւ չկարողանալով որ եւէ ելք գտնել, թափառում են անդունդից անդունդ, սխալից սխալ: Այն ինչ հարցը պարզ է: Այնպէս պէտք է անել, որ գիտու-

թիւնների տւած օգուտները չծառայեն միայն մի գասակարգի, չլինեն նրա ձեռքում իբր գործիք միւս գասակարգերը կեղեքելու համար:

Իսկ այդ նպատակին կարելի է հասնել միայն մի եղանակով. պէտք է փոխել ներկայ անարդար հասարակական կազմը, պէտք է չբացնել մասնաւոր սեփականութիւնը. հողը, արդիւնագործութեան բոլոր միջոցները պէտք է դառնան բոլոր մարդոց ամբողջ հասարակութեան սեփականութիւնը. ամէն մարդ պիտի աշխատի ընդհանրութեան գործարաններում, ընդհանրութիւնից էլ պիտի ստանայ իր ապրելու միջոցները:

Այն ժամանակ գիտութիւնը բարեբեր կը լինի ոչ միայն հարուստների, տիրողի ու բռնակալի համար, այլ ամբողջութեան, բոլոր մարդոց համար, որովհետեւ այլեւս գոյութիւն չեն ունենալ գասակարգերը, չեն լինի տէրն ու ծառան, բուրժուան ու բանւորը, բռնակալն ու հպատակը:

ԳԱՊԱՐ

—)(—

սպաննելով Ազիլի աղաղակագետը և անոր երկու ընկերները, խումբը ցրտացան ընել:

— Ռուսական թերթ մը կը գրէ թէ Ռուսաստանի հայերուն մէջ բաւական յուզում կայ Գեորգ Եպսեփի թերթի արտաստումին համար, և կը յաւելու թէ Ռուսաստանի հայերը գրգռուած են եպիսկոպոսին մէջ շրջաբերականովը:

— Եաշի մեր թղթակիցը, հակառակ տեղական թերթի մը հրատարակած խոստովողական առարկութիւններուն, կը պնդէ իր գրածներուն վրայ և կը յայտարարէ թէ գրական փաստերուն Տ. Աթանաս կարգալոյժ քահանայի մեղապարտութեան մասին: Կրնայ ըլլալ որ Տէր Աթանաս ուրիշ մեղապարտութեան վրայ, որովհետեւ Ռուսաստանի մէջ պարկեշտ քահանաներու թիւը խիստ քիչ է:

— Անցեալ կիրակի, քաղաքին Հայ Աւետարանական ժողովուրդին մէջ Պատ. Շահվէլէտեանի և Պատ. Եարաթեանի կողմէ քորոզներ խօսուած են Հայաստանի մէջ տիրող սովին առթիւ: Երեկոյին հանգանակութիւն Լատարուած է, որուն մասնակցած են փոքրիկ սղաքներ ալ մեծ ողբերութեամբ. դուամբ հասած է 155 ֆրանքի: Պուրկար Աւետարանականներն ալ հաւաքած են 30 ֆրանք:

Այս գիշեր Պատ. Հայկ Եարաթեան պիտի խօսի «Ճշմարիտ ազգասիրութեան վրայ» հայերէն լեզուով:

Պատ. Շահվէլէտեան պատրաստ է ընդունիլ որ եւ իցէ գուամար սովեակներուն համար:

Հասցէ՝

Pastor Chahveled
varna (Bulgarie)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բոլոր իրենց այցելած քաղաքները, Տիարք Կրէքօֆ և Ռատոսլավօֆ խոստացան ազատ ընտրութիւններ ընել, Բննագատելով նախկին նախարարութեան տնտեսական և ելիմտական գործունէութիւնները, մանաւանդ երկաթուղիներու խնդրին մէջ, որ երկրին տնտեսական տաղանակին պատճառ եղաւ, խոստացան բարենորոգումներ մտցնել վարչական բոլոր ճիւղերուն մէջ:

— Պուրկար խորհրդարանի անդամներու մերձաւոր ընտրութեան առթիւ, Պուրկարիոյ ամէն կողմը մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնուին: Ընդգրկմագիր կուսակցութիւնը նախարարութեան ազատ քուէարկութեան խոստումէն քաջալերուած, պիտի աշխատի բաւական աթոռներ ունենալ խորհրդարանին մէջ:

— Վառնայի թաղապետութիւնը լուծուեցաւ մնայուն յանձնա-

ժողովին մէկ որոշումին համեմատ:

— Կ. Պոլսի Պուրկարական նախարար գործակալաւոր, Մ. Մարքոֆի թերթի մը կը գրուած են և քննութեան պիտի ենթարկուին:

— Երէկ Վառնայի պահականուցէն հայոց եկեղեցին յանձնուեցաւ Պրուսացի կարապետ անուն երիտասարդի մը դիակը: Որովհետեւ այս երիտասարդը միշտ կը գինոգնար և տանը մէջ նեղութիւն կը պատճառէր, իրեն ծնողքին խնդրանքին վրայ բանտարկուած էր և ինքնասպան եղաւ:

— Թղթատարական վարչութիւնը տեսնելով թէ պատկերաչարք բաց-գիրներու (քառթ վոթաթալ) թիւը կառելնայ հետադետէ և դժուարութիւններ յառաջ կուգան, արգիւյց անուց գործածութիւնը, Այսուհետեւ այս բաց գիրները թղթատարական վարչութեան հաւանութիւնը ստացուելէ յետոյ պիտի վաճառուին: Հասարակութիւնը՝ ծախողներուն քով պիտի գանէ վարչութեան կողմէ արուած արտօնութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փիլիպեանները. — Զօրավար Օթիս կը հեռագրէ թէ ամերիկեան զօրքերը գրուելէ յետոյ Սանթա Գրուզը, հալածեցին և ցրուեցին ապստամբները: Գրուեցին բոլոր նահերը լծին վրայ, նաեւ սպանիական թնդանթակիրները: Միեւնոյն ժամանակ ամերիկեան ուրիշ բանակ մը հալածեց ապստամբները, որք կը ջանային ամերիկեան զօրքերու հաղորդակցութիւնը կտրել Մանիլայի հետ: Ապստամբները հարիւրի չափ մեռեալ և վիրաւորեալ ունեցան: Ամերիկացոց կորուստը աննշան է: Ապստամբները առջի օրը յաջողած էին հեռագրական թելերը կտրել: Փոխըստական ապստամբ մը փորձեց սպաննել Ամերիկացի զօրավար Լօթըն, բայց անմիջապէս սպաննուեցաւ: Հինգ ամերիկացի զինուորներ որք Մալինթայի մէջ պահակի պաշտօն կը վարէին, յարձակում կրեցին ապստամբներէ և սպաննուեցան:

ՉինԱթ. ֆիլիպեանները. — Հոլանտական կառավարութիւնը իր զեպաններուն միջոցով հրաւիրագիրներ զրկած է պետութեանց: Վեհաժողովը վերջնականապէս պիտի գումարուի մայիս 18ին:

— Գերմանիոյ կայսեր կողմէ նշանակուած պատուիրակը, Փրօֆ. Սթէնկէլ, տետրակ մը հրատարակած է «Կառնտեանական Խաղաղութիւնը» խորագրով, յայտարարելով թէ Քրիստոնէութիւնը և քաղաքակրթութիւնը հակառակ են խաղաղութեան, և թէ մշտապէս պատերազմ է անոնց նշանաբանը:

— Վեհաժողովին մէջ վիճարանութիւն պիտի չըլլայ քաղաքական խնդիրներու վրայ կամ դաշնակիրներու հաստատուած գործերու վրայ: Ամէն երկիր մէկ ձայն պիտի ունենայ: Պայքը որ և իցէ հրաւէր ստացած չէ:

Թոմիթիլ. — Իրուս կառավարութիւնը անբուական համարած է հինգ նահանգներու մէջ պատերազմի տուգանքի յատկացուած տուրքերը, և երկու ուրիշ նահանգներու նոյն տուրքերն ալ պահանջած է, որք պէտք է հաւաքուին Օթոման պանքայի միջոցով: Գուռը պաշտօնապէս հաղորդած է թէ Պրուսայի և Զմիռնիոյ նահանգներու տուրքերը յատկացուած են նոյն նպատակին նախարարներու ժողովը մազպաթա մը պիտի ներկայացնէ:

— Թուրքիա որոշած է փսիանակ զերմանական զործարաններու շինել տալու իր հրացանները և փամփուշտները, ինք շինել: Այս մասին հարկաւոր գործիքները բերուած են Եւրոպայէն: Թուրքիոյ շրջերուն դպած էր անցեալները զերմանական զործարանի մը կողմէ, առանց կանխաւ գրամը ստանալու, Պոլսաբերուած հրացաններուն և վամփուշտներուն չը յանձնուիլը:

Կիլիճէ. — Իսլամները կը գաղթեն մեծ բազմութեամբ իրենց բոլոր ինչքը ծախելէ յետոյ չընչին գինեթով: Միակ անգլիական շոգենաւ մը 500 գաղթականներ փոխադրած է: Իսլամները կը ենթարկեն Սուլթանին հրամանը կը կատարեն գաղթելով:

— Անգլիա ուղեց որ Գանտիայի եւրոպական զինուորները խառն ըլլան, որպէսզի տարածայնութեանց տեղի չը տրուի և հանրային ապահովութիւնը աւելի կատարեալ ըլլայ: Բայց պետութեանց ծովակալները մերժեցին ՍԱՄՕԱ. — Սամոայի մէջ արիւնալից կռիւններ պատահեցան: Անգլիական և Ամերիկեան իշխանութիւնները յայտարարութեամբ մը հրաւիրեցին Մաթաֆան որ անձնատուր ըլլայ: Գերմանական հիւպատոսին խրատով, Մաթաֆա դէմ կեցաւ և շարունակեց կողոպտել օտարներու ստացուածքները: Յարձակում ըլլալով, ապստամբները շատ մարդ կորսնցուցին: Ամերիկացի ու Անգլիացի զօրքերը գարանի մէջ իյնալով, մեծ քաջութեամբ ազատեցին զիրենք մէկ քանի կորուստներն ալով: Ապստամբները մեծ կորուստներ ունեցան: Կռիւր կը շարունակուի Անգլիական կառավարութիւնը զրահատուր, զէնք և զինուոր կը շրջէ: Մեծ ցրտութիւն կայ մէկ կողմէ գերմանացոց և միւս կողմէ ամերիկացոց և անգլիացոց միջեւ: Ամէն կողմէ ցաւ կը յայտնուի թէ զերմանական կառավարութիւնը շատ անձնատէր և զրոգիչ ընթացք ունեցած է հանդէպ միւս

պետութեանց: Երեք պետութիւնները որոշած էին մասնախումբ մը կազմել այս գործերուն համար, բայց Գերմանիա, իր խառնակիչ քաղաքականութեամբ, արգելք կը ըլլայ ամէն տեսակ կարգադրութեան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Սամոայի մէջ Ամերիկացիք և Գերմանացիք մեծ հակակրօթիւն կը ցուցնեն: Գերմանական սպայ մը Ամերիկեան պահակի մը արգելքին շանալով երբ կուզէր անցնիլ, ամերիկացին ապստակ մը իջեցուց անոր ըսելով, «Ըսէք ձեր բարեկամներուն թէ ամերիկացի մը հանդիպեցաք»:

— Բուսնիոյ նախարարութիւնը, ընդդիմագիր կուսակցութեան յարձակումներուն առջեւ, հրատարական տուաւ: Մեծ յուզում կայ ամբողջ երկրին մէջ: — Մօնթենէկրօյի գահաժառանգը պիտի ամուսնանայ ուսուարքայական գերդաստանէ իշխանուհիի մը հետ:

— Անգլիոյ դիւլային ժողովներու ընտրութեանց միջոցին ազատական և յառաջդիմական տարրերը մեծ յաջողութիւն ունեցան:

— Ռուսիոյ բարձրագոյն զգարուցներու ուսանողներուն մեծ մասը վերստին ընդունուեցան իրենց դասերուն մէջ: Երբ յուլուսներ տեղի ունեցան, Ռուսիականներու և ուսանողներու միջեւ ընդհարումներ պատահեցան: Բազմաթիւ ուսանողներ կը յայտարարեն թէ հանդարտ պիտի չը մնան մինչեւ որ իրենց բոլոր մնացած ընկերներն ալ, թիւով 3,000, վերստին չընդունուին:

— Անգլիոյ խորհրդարանին մէջ մեծ վիճարանութիւն եղաւ պետութեան նպատ ստացող ըմբոստ կղերներու մասին: Յետոյ որոշուեցաւ ցաւ յայտնել եղած անհնազանդութեանց համար և խնդրել կառավարութիւնէն որ այսպիսի կղերները պաշտօնի չը կոչուին:

ՎԱՐՈ

ԵՐԵՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

(Գին 1 Ֆրանգ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպե՛ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեստմս, հասցեստմս, նամակագրութիւն, հարստեանական հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշնուներ:

Գիներն յոյժ դիւրամուտչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ

Печатница «Взаимность» Варна.